



## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(Հուշեր ծննդյան 85-ամյակի առքիվ)



Պրացյալ Կոմիտաս վարդապետը  
ծնվել է Թյուրքիայի Քյոթահիա  
(Կոտինա) քաղաքում 1869 թվա-  
կանի սեպտեմբերի 26-ին, Սովո-  
րումուն անունով. վախճանվել է Փարիզի Վիլ-  
ֆլուիլ հիմնադանոցում 1935 թվականի հոկ-  
տեմբերի 22-ին: Հայրենադարձ հայեր նրա  
աճյուղը հետները բերին նրեան և այնակը  
էլ, իր սիրած մայր հողում վերաթաղեցին  
1936 թվականին:



Ես ի՞նչ իմանայի, թե Ճեմարանում հետո  
մեկ ու ճանադի խաղացող Սողոմոնը՝ Կոմի-  
տաս անունով մեծ Կոմպուտոր պիտի դառ-  
նար ու հոչակ վայելեր: Եթե դուշակեի, եթե  
իմանայի, հենց այն ժամանակվանից կու-  
սումնասիրեի նրա նիստ ու կացը, բնավո-  
րության գծերը, նրա ամբողջ էությունը:

Երբ ախալցիացի աշակերտուներս 1884  
թվականին զնացինք էջմիածին և ընդունվե-  
ցինք Ճեմարան, միասին դասընկեր եղանք  
նրան: իմացանք հատկապես, որ նա էլ նույն  
տարին Ժառանգավորաց դպրոցից փոխա-  
դրվել էր Ճեմարան:

Ճեմարանի 2-րդ դասարանում մեր երգե-  
ցողության ուսուցիչը Սահակ սարկավագ  
Ամատունին էր: Սա էլ Օշական գյուղից էր,  
և նիկողայոս թաշճյանին աշակերտել էր՝ լի-  
նելով Մակար Եկմալյանի դասակիցը:

Ամատունին հմուտ էր հայկական ձայնա-  
գրության, եկեղեցական շարականների Պոլսի  
եղանակներին, բայց ինքը մեզ դաս տալիս,  
գերադասում էր էջմիածնի հին եղանակնե-  
րը, այդտեղից էլ իրեն դասանուվ էր ընտ-

րում: Նրա սովորեցրած երգերը մեծ մասսամբ  
դրաբար էին և կամ միշնադարյան-աշուղա-  
կան հայերենով: Սահակ սարկավագի ձայնը  
մեղմ էր և դուրսկան, խոսակցությունը ցածր  
ու համեստ Սողոմոնը նրա բոլոր ձեռքը ընդ-  
օրինակում էր, սովորեցրած երգերը՝ անգիր  
անում: Դրանք էին. «Երկինք զռարթ ակնար-  
կեր», «Ես յարկս սիրմ», «Եհա աշնան առա-  
ւոտ», «Ի կանխագէտ տեսչութենէր», «Է՛յ,  
իմ վարդիկ» և այլն, կամ Գամառ-Քաթիպա-  
յից վերցրած՝ «Բող փէք քամին պաղ-պաղ»,  
«Մէր խեղա ազգը ուսում չունի», «Հիմի՞ էլ  
լունք» և այլն:

Սահակ Ամատունին ուներ նաև բանաս-  
տեղծական շնորհք. նա երեխն իրենից է՝  
եղանակում, «Նայեցէք Արմաւրին՝ ո՛վ հայ  
պատանիք», «Ծխուր-տխուր ձայն եմ տալիս  
իմ Ախուցեանէն», երբեմն էլ իր գրած՝ հե-  
ղինակած ուսանավորները կարդում լու հան-  
դիսավոր օրերին՝ Ճեմարանի հանդիսարա-  
նում: Նրա սովորությունը մի քիչ նման էր Գա-  
մառ-Քաթիպային, որից մի քանի ոտա-  
նավորներ տպված կան «Սոխակ Հայաստա-  
նի» երգարանում: Հենց այդպիսի բանաստեղ-  
ծական ձիբք և երգեցողության հմտություն  
ուներ և մեր Սողոմոնը: Սա էլ երեխն իր  
բանաստեղծական խճրծանքները կարդում  
էր տոն օրերին, ինչպես «Մին ծին ծիրանի»—  
նմանողությամբ Հայր Ղևոնդ Ալիշանի:

Բացի իր սովորած և ընդորինակած երգե-  
րից՝ Սողոմոնը սիրահար էր նաև տաճկական  
և քրդական երգերի, որոնք երգելով կոմիկո-  
րեն մեզ զվարճացնում էր: «Հայ դին-դին  
հովիա տա գյալ, շալվարըն թոփիւ տա  
դյալ», կամ քրդական մղմղոցներով ու միմի-  
կաներով երգում էր շարունակ.

լելի գավրի մըյար կըրթյա-ա՛ ժըթո-ռունա՛,  
լելի սընկես բիե՛—է՛, կայդա դընե՛—է՛,  
վայլի լելի բիե՛—է՛, վայլի լելի բիե՛—է՛,  
քաֆըր գավրի բիե՛, քաֆըր գավրի բիե՛...»:

Հիշում եմ նույնպես, որ Սողոմոնը եվրո-  
պական նոտաներով գրված մի դասագիրք  
ուներ, որը սերտողության ժամերին անդամ  
առջևն էր դնում, ականջները երկու ձեռքով



Կոմիտաս վարդապետ

Սողոմոնը տարօրինակ մղմղոցալին վեր-  
չավորություն էր տալիս երգին, ինչպես հա-  
տուկ է քրդերին:

փակում, որ կողմնակի շշումներ լսի, ու ինքն  
իրեն կամաց կրկնում էր՝ դօ, րե, մի... և  
սովորում էր: Ճեմարանի աշակերտներս այդ

ժամանակ գծային սիստեմի մասին գաղափար շունեինք. կարծում էինք, թե հայկական նոտաներն են, որ կան: Եվրոպականի համար Սողոմոնն ասում էր. «Թան չէ», մատուն չէ՝, ամեն մարդու բանը չէ»: Եթե ճիշտ խոստովանինք, պետք է ասենք թե՝ այդ տղան բացի նոտաներից ու երգերից, բացի հայոց լեզվից ու բանաստեղծություններից՝ ուրիշ առարկաներով չէր հետաքրքրվում:

Յ-րդ դասարանումն էինք, որ երդ-ձայնագործության համար նոր ուսուցիչ նշանակվեց վերակացու Մինաս Աղմավուրյանը. սակայն Սողոմոնը ձայնագործության արվեստը նրանից լավ էր իմանում. ուստի նոր դասարանու Մինասը երբ մեղ որևէ շարական էր բացատրում սովորեցնելու համար, ամենից առաջ այդ շարականը երգել էր տալիս Սողոմոնին, իսկ մեղ պատվիրում էր նրան հետևել, նրանից սովորել և դասը պատրաստել: Սողոմոնը շարականների ութ ձայն հղանակները և նրանց ելեկչները իրենց բնորոշ դարձվածքներով ուներ գուած, ուսումնասիրում էր այն, նա Յ-րդ դասարանից (ներկա 6-րդ) արդեն սկսել էր հայկական ձայնագործության պատմությունը գրի առնել՝ պոլսեցի Համբարձում պապայից մինչև Ն. Թաշճյանն ու իր աշակերտները, Այդ, դեռևս անմշակ, տեսրներից ես օգտվել եմ և արտագրել, որը պահել էի մոտու, բայց ուշադրություն չէի դարձնում, մինչև որ Ռումանու Մելիքյանի խնդրանաց համաձայն նրան տվի:

Իսկ ի՞նչ վիճակի մեջ էր ընդհանրապես ձեմարանը:

Սողոմոնի և մեր ուսանողության տարիներին՝ ձեմարանն ուներ իր արդեցիկ խումբը, որը պատրագին երգում էր միաձայն նկեղեցում, իսկ ցերեկույթ-երեկույթներին՝ ձեմարանի հանդիսասրանում. ձեռնարկներ ունեինք՝ Ն. Թաշճյանի ձայնագործ պատրագի երգեցության գիրքը և ն. Քահանա Եղիշևանի պատրանցը: Բոլոր աշակերտներս պարտական էինք հերթով եկեղեցի գնալ, ժամասացության մասնակցել լի օրերին: Ամենօրյա հերթապահներն ունեին իրենց հմուտ դասապետը՝ երգիչների միջից ընտրած: Սողոմոնը նույնպես դասապետի պաշտոն ուներ. նա իր շնորհալի կառավարությամբ աշքի ընկալնա հետ՝ դեմ առ դեմ եկեղեցում մրցակցում էր վաղարշապատի Տիգրան Ռիթեույանը, որը նույնպես քաղցր ձայն ուներ և

նրանից մի դասարան բարձր էր: Թայց Սողոմոնի աշքը է՛լ ավելի բացվեց ա՛յն ժամանակ, երբ Մ. Եկմալյանը Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելով եկավ էշմիածնի՝ իր կազմած եռաձայն պատարագի երգեցը ձեմարանի աշակերտներին սովորեցնելու և եկեղեցում երդել տալու:

Ս. Եկմալյանի փորձական դասերին Սողոմոնը նրա օգնականն հանդիսացավ: Այս դասմերին՝ թեպետ ձայն չունեի, բայց ես կ էի մասնակցում: Ամառվա ամիսներն էին՝ 1888 թվականի: Ամառվա աշակերտները ցըրվել էին, էշմիածնում մնացածները քիչ էին, ուստի և ինձպեսներին էլ հերթ հասավ մասնակցելու: Մի-երկու ամիս պատրաստվելուց հետո՝ հաջողվեց եկեղեցում երգելու մի քանի հատվածները: Սողոմոնը արդեն թե առաջ ու սկսեց ինքնուրույն կերպով ուսումնասիրել ներդաշնակ՝ եռաձայն, քառաձայն երգերի: Ձեմարանի հանդիսարանում զոված կար մի ֆիւ-հարմոն, որի վրա սկսվում էր ինքնուրույն նվազել և առաջադիմել: Հենց հնատկալ 1889 թվականի հունիսի 17-ին էր, որ ձեմարանի սաներից ումանք Օրմանյան Խափսկոպոսի քարոզներից ազդված, հանձն առան համեմ հոգկոր սքեմ— տեսուչ Արշակ Նահապետյանի օրինակով: Մեր՝ վիցերորդ դասարանից էլ շորս հոգի սարկավագության աստիճան ստացան. դրանցից մեկն էր Սողոմոնը, որ այնուհետև իր անունը ու ազգանունը ստորագրում էր Ս. Ս. Ս., այսինքն՝ Սողոմոն սարկավագ Սողոմոնյան:

Յ-րդ դասարանը՝ ձեմարանի դպրանոցական բաժինն ավարտելուց հետո 1890 թվականին, ես հեռացա ձեմարանից, ուսուցչի պաշտոն ստանձնեցի Մողդոկ քաղաքում, իսկ Սողոմոն սարկավագը իր կարգակից ների հետ մտավ լսարաններն ու շարունակեց ուսումը, մեծ մարդ դարձաւ, Մկրտիչ Խորիմյանի օրոք վարդապետ ձևուագիւցի և վերակոչվեց Կոմիտաս, որի լրիվ կենսագրությունը՝ ցանկացողը կարող է իմանալ Թիրիմեղյանի գրքույներից: Թայց այնտեղ մի կարծիք սխալ է դուրս բերած՝ իբրև թե էշմիածնը նրան հալածում էր: Այսպիսի սխալների մեջ շատերն են ընկել, ցուց տալու համար իրենց առաջադիմությունը: Որքան մեղ հայտնի է, Կոմիտասը էշմիածնի աշակերտությամբ և բոլցուա Մանթաշյանի նպաստով 1896 թվականին անցավ Գերմանիա և Ելբրուս առհասարակ, կատարելագործելու իր թերին:

Դրսի կյանքիս մեջ Կոմիտասին հանդիպել եմ երկու անգամ: 1893 թվականի ամռանը Մողովից տարա Ճեմարան՝ դպրոցն ավարտող աշակերտներիցս ամենախեղճին՝ Օրդուխանյան Գեորգին, էջմիածնում հանդիպեցի իմ նախկին ընկերներին, որոնց հետն էր և Սողոմոն սարկավագը: Մեր հանդիպումը սրտառուշ էր. վերհիշեցինք մեր անցյալ ճեմարանական կյանքը: Սողոմոնը իր ընկերների հետ ինձ հրավիրեց ներսիսյան անտառ՝ քելք անելու: Ընկերներս ինձ լավ հյուրասիրելոց հետո՝ բերածս աշակերտին հանձնեցին թումա վարդապետին, որ նա պահե, պատրաստե, սեպտեմբերին ճեմարան ընդունել տալու: Այդպես էլ եղավ: Ճեմարանի երգեցողության ուսուցիչն էր Ք. Կարա-Մուրզան, որին Մկրտիչ Նորիմյանի կաթողիկոսության տարին էջմիածնից հետացրին: Ճեմարանի երգեցողության դասատու նշանակվեց Սողոմոն սարկավագ՝ իրին «Հայաստանյաց եկեղեցու հարազատ զավակ»: Նույն 1893 թվականի սեպտեմբերին: Այդ միջոցներին, իհարկե, Սողոմոնը երաժշտության մեջ Ք. Կարա-Մուրզայից թույլ էր. այս բանն ինքը՝

Սողոմոնը զգալով, գնաց Թիֆլիս՝ Եկմալյանի մոտ և ապա անցավ արտասահման՝ իր սիրած գեղարվեստի մեջ կատարելագործվելու:

Երկրորդ անգամ Կոմիտասի հետ իմ հանդիպումը տեղի ունեցավ 1895 թվականին: Մողովից Թիֆլիս հանդիպելիս, լսեցի թե Կոմիտասը Ս. Սարգիս եկեղեցու դպրոցումն է ապրում. գնացի այցելության: ինձ ընդունեց ուրախական աղաղակով. դասարանում դրած դաշնամուրի առջև նստած սկսեց իր սովորած հարմոնիայի կադանսներից նվազել, ցուց տալով դրա օրենքները և նրա մեջ հղած բացառությունները: Այդ օրը նա ինձ մի կամերտուն նվիրեց, որը մինչև այսօր մոտու է իրեն ընկերական մի սուրբ հիշատակ:

Արմավիրից ունեցածս զբագրությանց միջոցին՝ նա ինձ ուղարկելու է «Ամեն հայի սրտից բղասձ» օրհնեցը, որը տպել եմ տվել Մոսկվայում «Ուղեցուցախ» մեջ, իսկ «Մայր Արաքսին» եռաձայն և «Ճիմի» էլ լմենքը իր ֆիգուրաներով հանդերձ և երդիրի արտագրածներս սեւզրությանց տեսրակումս են մնացել: Ափա՛ս, որ նրա նամակները կրակի ճարակ են դարձել,

